

ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանատիպ մեջ:

Օտարաբարությունը դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Հայտարարութիւնների համար զմարում են
խորանայի րուբլին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՊԱՆՈՒԹԻՒՆ

Առաջին քայլը—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նա-
մակ Ս. Պետերբուրգից:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. «Порядок» քաղաքի թղթակցութիւնը:
—ՀԵՌԱՊԵՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐ:—
ՖԵԼԻԵՏՈՆ:

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԸ

Մենք միշտ յայտնած ենք
այն միտքը թէ թիւրքիայի հայ
ազգաբնակիւթիւնը պէտք է աշ-
խատի համերաշխ լինել ոչ թէ
միայն այլակրօն հայերի հետ,
բայց և Հայաստանի մէջ բնակ-
վող այլ ցեղերի և ազգութիւն-
ների հետ: Հայը Հայաստանում
պէտք է վերջապէս հասկանայ
որ թիւրքաց Հայաստանը մի
ամբողջ երկիր է, որի մէջ բը-
նակվող բոլոր ազգաբնակիւ-
թիւնները բարոյապէս և տնտե-
սապէս պէտք է համերաշխ լի-
նեն միմեանց մէջ: Թիւրքիայի
հայը պէտք է վերջապէս յիշի որ
բացի հայ լինելուց, նա հա-
յաստանցի է և նոյնպէս հա-
յաստանցի են այն բոլոր ազ-
գերը, որոնք բնակվում են նրա
հետ միասին նրա հայրենիքում:
Եթէ հայը ճշմարտ է կառավա-
րութենից, նոյնքան ճշմարտ են
Հայաստանում ապրող ասորիւն,
թիւրքը, եզիզիւն, յոյնը և այլն.
Եթէ հայը հարստահարվում է
թիւրքի ձեռքով, նոյնքան հարս-
տահարվում է նոյն թիւրքի ձեռ-
քով և թիւրքը: Եթէ թիւրքը
աւազակ է և նրան պէտք է քա-

ղաքակրթել, —նրան անհրաժեշտ
է քաղաքակրթել նոյնքան հայի
օգտի համար, որքան և Հայաս-
տանի միւս խաղաղ ազգաբնա-
կիւթիւնների համար: Եթէ հա-
յաստանցի հային անհրաժեշտ է
ինքն և իւր ընտանիքը, այդ
ինքնավարութիւնը նոյնքան ան-
հրաժեշտ է և հայաստանցի միւս
ազգութիւնների համար

Հայը Հայաստանում աւելի
ընդունակ է, աւելի առաջադեմ
է, աւելի քաղաքակիրթ է քան
թէ իր հայրենիքի միւս ազգերը:
Հայի վրա դրված է բարոյական
պարտաւորութիւն իր հայրենի-
քում ապրող միւս ազգութիւն-
ներին քաղաքակրթել, նրանց ա-
ռաջնորդել լուսաւորութեան և
քաղաքակրթութեան ճանապար-
հի վրա:

Այդ գործը հայը կարող է
կատարել երկու ճանապարհով:
մինը դանդաղ ճանապարհով, ու-
սում տարածելով իր հետ խառն
ապրող ազգութիւնների մէջ, նը-
րանց իր դպրոցները ընդունելով,
նրանց համար դպրոցներ հիմնե-
լով, նրանց հայացնելով: Բայց
զրա համար երկար տարիներ են
հարկաւոր:

Երկրորդ ճանապարհը աւելի
կարճ է. հայը պէտք է ամեն
հասարակական, կամ տնտեսա-
կան դէպքից օգուտ քաղի իր
համերաշխութիւնը ցոյց տալու
դէպի այն բոլոր ազգերը, որոնք
բնակվում են իր հայրենիքում:

Մարդս այնպէս է ստեղծված,
որ նրա համար նիւթական շա-
հերը միշտ աւելի մեծ նշանակու-
թիւն ունեն, քան թէ բարոյա-
կան և հոգեւոր ձգտումները:
Մարդիկների միմեանց մէջ հա-
մերաշխութեան զգացմունքը ծըն-
վում է նախ և առաջ և զխա-
ւորապէս նիւթական հոգի վրա,
իսկ բարոյական համերաշխու-
թեան գաղափարները միշտ աւե-
լի ուշ են հասկացվում:

Թիւրքը ապրում է, և գուցէ
երկար կարող է տպրել, առանց
զրազիտութեան, առանց ուսման,
առանց դպրոցների, բայց առանց
հայի նա չէ կարող ապրել:
Հայի խնդրի, նիւթական խն-
դիրների, հարկերի վճարման,
նիւթական հարստահարութեան,
կեանքի թշուառութիւնների հո-
ղի վրա բոլոր հայաստանցիները
միմեանց շատ շուտ և շատ լաւ
կարող են հասկանալ. դրա հա-
մար հարկաւոր չէ երկար փիլի-
սոփայութիւն: Հարկաւոր է մի
առաջնորդող ոյժ միայն,—և այդ
առաջնորդող ոյժը Հայաստանի
բոլոր ազգերի վերաբերութեամբ
կարող է հայը լինել:

Վային, գայմազամբ ճշմարտ է
գաւառի գիւղական ազգաբնա-
կիւթիւնը, թիւրք աւազակը ան-
պատիժ կողոպտում, հարստահա-
րում է մի նահանգի ազգաբնա-
կիւթիւնը,—եկէք միանանք, կա-
րող է ասել հայը թիւրքին, բո-
լորս էլ միակերպ տանջվում ենք,

համերաշխ լինենք, միասին դո-
ժենք, խնդիրք տանք, աղերա-
գիր միասին ստորագրենք, զան-
գատվենք, մենք մի երկրի մար-
դիկ ենք, մի հաց ենք ուտում,
մի օդ ենք ծծում, մի տեղ ենք
ծնվում, ապրում ու մեռնում, մի
երկրի որդիներ ենք, բոլորս էլ
եղբայրներ ենք: Աւ ահա սկս-
վում է համերաշխութիւն, սկս-
վում է հասկացողութիւն թէ բո-
լորս էլ մի հայրենիքի անդամ
ներ են...

Կ. Պօլսի «Հայրենիք» քա-
ղերը հաղորդում է որ նորերում
Վանի նահանգի Մոկս գաւառի
հայ և թիւրք ժողովուրդը
միմեանով մի հանրագիր ստո-
րագրեցին և մատուցին թէ Վանի
կուսակալին և թէ հեռագրեցին
այդ մասին Ներսէս պատրիար-
քին, Բ. Դրանը իրանց գանգա-
ւոր հարստահարիչների դէմ հա-
ցնելու համար:

Ահա առաջին քայլը Հայաս-
տանի ազգաբնակիւթեան հասա-
րակական համերաշխութեան մի
ցոյցի:

Նիւթական, կենսական, տըն-
տեսական հոգի վրա ազգերը ա-
ւելի միմեանց կարող են մտե-
նալ, իրար հասկանալ, քան թէ
ուսման, լուսաւորութեան հոգի
վրա:

Թող այդ տեսակ դէպքերը
կրկնվեն, թող հայերը միշտ
ձեռք մեկնեն դէպի հայաստանցի
միւս ազգերը ընդհանուր նեղու-

ՖԵԼԻԵՏՈՆ

Իմ ֆելիետոններս:—«Порядок» քաղաքի
«Մշակ» մասին:—Ուրա հասարակութիւնը և
հայոց մամուլը:—Կարճակ թանաք:—Թիֆլիսի
հայերը:—Հայոց ազգը և մայրենի լեզուն:—Փող
և բարոյական իրէպններ:—Ազգութիւն և կրօն:
—Կրօնի գործնական կողմը:—Կրօնի երկրորդ
և քսան կողմնակող մոմ:—Ցոյց և մոգաւ:—Հարե-
մական կանայք:—Վաճառականի դանդաղութիւն:
—Նրկու անցք:—Սովետները և տիկին Պավլովն:
—Հայը ժառոտ չէ:—Երիցօլ և հնազանդական ժո-
ղովրդ:—Հայոց ժողովրդական լեզուն:—Մի հարց
առանց պատասխանի:

Վաղուց է խոստացել էի ամիսը մի անգամ
ֆելիետոններ գրել, Ս. Պետերբուրգում կամ
Մոսկվայում կենքը այնքան հարուստ է այլ և
այլ հասարակական երևոյթներով, որ այնտեղ
չարթնում մի անգամ կարելի է ֆելիետոններ գը-
րել, իսկ մեզանում աւելի շուտ չէ կարելի գրել
ֆելիետոններ, քան թէ ամիսը մի անգամ:
Այս տարի ես մի ֆելիետոն գրեցի յունվար
ամսին, Սա կը լինի երկրորդը, փետրվար ամսին:
Ուրեմն այս տարի յոյս ունեմ թէ ինձ կաջող-
վի ամիսը մի անգամ ֆելիետոն գրել:

Ֆելիետոնը այնպիսի բան է, որ շատ անգամ
մի օր և է միտք, ծանօթի մի ասած խօսք, քա-
ղերում կարդացած մի քանի տողեր, բաց են ա-

նում գրողի առջև ֆելիետոնի մի ամբողջ պը-
ղամ: Այդպէս էլ եղած ինձ հետ այս անգամ:
Բաց արի ուս. «Порядок» քաղաքի թերթը
և կարդացի կովկասեան հայոց քաղաքութեան
մասին առհասարակ և «Մշակի» մասին մասնա-
ւորապէս հետեւեալը:

«Ոչ մի հայոց քաղաք չը կայ, որ կարողանար
իր եկամուտով ծածկել իր ծախսերը, բոլորն էլ
ունեն դէֆիցիտ և ապառիկներ բաժանորդների
միջոց: Ամենօրեայ «Մշակ» քաղաքը, մտնելով իր
հրատարակութեան տասներորդ շրջանը, հանդի-
սաւոր կերպով յայտնել է որ վերջապէս այս
տարի յոյս ունի ծածկել իր ծախսերը: Եւ ու-
նէր անցել տարի 1100 բաժանորդ, որ հայոց
թերթի համար մի չէրած թիւ է համարվում:
Կրանից կարելի է եզրափակել ինչ նիւթական
գրութեան մէջ են այն երկրորդական քաղաքնե-
րը, որոնց բաժանորդների թիւը 150 մինչև 400
է: Բայց, մի և նոյն ժամանակ, նրանք բոլորն
էլ շարունակում են կատարել իրանց յանձն ա-
ռած պրօգրամը: Աշխատանքի ծանրութեան գրե-
թէ երկու երրորդականը դրված է խմբագիր-
հրատարակողի վրա: Ամեն օր գրել առաջնոր-
դող յօդուածները, գրել ֆելիետոններ, ընթերցե-
լի պաշտօնը կատարել, մինչև լոյսը նստել տը-
պարանի մէջ (որ ի հարկէ սեփական տպարան
չէ), սպասելով որ ցէնզորից ստացվի թոյլ տուած
համարը, շատ անգամ նոյն իսկ տպարանում գը-
րել յօդուածներ արգելաւանդելու տեղ, ենթարկվել
զատաւարական տուգանքներին և այդ երկու

կատարել հասարակութեան պլատֆորմի վրա
շնորհակալութեան համար,—ահա հայոց քաղաքի
խմբագիր—հրատարակողի դրութիւնը: Աշխատա-
կիցներն ու թղթակիցները ձրի են աշխատում:

Կարդալով այդ կտորը որ թէ և մի քանի ան-
շան անձնութիւններ ունի, բայց առհասարակ
ճիշդ նկարագիր է հայոց քաղաքի դրութեան, ես
մտածեցի. գոնէ հայոց հասարակութիւնը ամա-
չել, որ ամբողջ առեւտր հասարակութեանը
յայտնի կը լինի թէ հայը ինչպէս է պահպանում
իր մայրենի լեզուն: Կարող եմ հրատարակելով թերթը. եւ
թող չը մոռանան հայերը որ այդ կտորը տպված
է այնպիսի քաղաքում, որ կարճ ժամանակում
մեծ նշանակութիւն է ստացել արդէն ամբողջ
Ռուսաստանում: Ուրեմն ամբողջ Ռուսաստանը
կը կարդայ և լաւ կը ծիծաղի հայերի վրա, ո-
րոնք մեծ մեծ խօսում են, բայց շատ քիչ գործ
են կատարում... Երկի հայերը բաժանում են
այն կարծիքը, որ ազգին թանաքով օգնո-
ղին՝ օգնել պէտք չէ...

Բայց ամիսն որ «Порядок» քաղաքի չէ ի-
մացել, որ 40 հազար հայ բնակիչ ունեցող Թիֆ-
լիսում «Մշակը» ունի հազիւ երկու հարիւր
բաժանորդ. այդ իրողութիւնը մեզ, հայերին վրա,
լաւ ծիծաղելու առիթ կը լինէր առեւ հասարա-
կութեան համար:

Բայց թողնենք հանաքը և ծանր խօսենք:
Մէթէ, ճշմարտ, կարելի է յանկարծ ինքնաճա-

նաչութիւն պահանջել մի ազգից, որ դարեւում
ապրում էր և շատ լաւ էր գրում իրան առանց
մայրենի լեզուի: Վրաստանի հայը վրացերէն էր
խօսում, երևանի ու Նախիջևանի հայը թուրքե-
րէն, Մուշի և Բաղէշի հայը քուրդերէն, Թաւ-
րիզի հայը պարսկերէն...

Հայը գործնական ժողովուրդ է: Հայերէնը,
մայրենի լեզուն հայ չէ տալիս, ուրեմն կարելի
է այդ մայրենի լեզուն մոռանալ: Մայրենի լե-
զուն այն ժամանակ միայն գին կունենայ հայի
համար, երբ դրանով կարելի կը լինի հարստա-
նալ, փող վաստակել, ապրել:

—Վրացերէն էլ խօսելով փող կուտ է, ա-
սում է գործնական թիֆլիսցի հայը, էլ ինչին է
պէտք ինձ հայերէնը:

—Իրուստ ես ասում, եղբայր, պատասխա-
նում է Հին-Նախիջևանի հայը, ես էլ հայի մէջ
պակասութիւն չեմ գտնում թուրքերէն (թաթա-
րերէն) խօսելով:

Ուրեմն ամեն բան փողի համար... Բարձր,
ազնիւ, բարոյական մտքեր, իղէպններ,—դարդակ
բաներ են...

Եթէ թիֆլիսցին համոզված լինէր, որ «Մշա-
կի» իւրաքանչիւր յօդուածը կարդալուց յետոյ
նա կարող է աւելի լաւ աշուղդներ իր պօղ-
րի աղն երբ, աւելի լաւ առուուուր անել,
հարստանալ,—այն ժամանակ նա անպատճառ
կը գրվէր «Մշակին»: Կամ եթէ խմբագիրը նը-
շանակութիւն ունեցող մի մարդ լինէր քաղա-
քում կամ երկրում, որից կարելի էր կախած

Թեան ժամանակ,— և շուտով Հայաստանի բոլոր մնացած ցեղերը իրանց համերաշխ կը զգան հայերի բոլոր ձգտումների հետ։ Ոչինչ այնքան չէ մտնեցնում մարդկանց, որքան ընդհանուր զգալիությունը։ Իսկ այդ տեսակ դրուժինից, այն համակրական, համերաշխ զգացմունքից որ կարող է ծնվել ընդհանուր զգալի դրուժինից, պէտք է իմանալ օգուտ քաղել։

Եթե հայը, յիշելով էլ որ ինքն հայ է, միշտ կը յիշի որ նա բացի սորանից հայ առաջին է, կը յիշի որ թիւրքը, քիւրդը, եղիզին, ասորին նոյնպէս հայաստանցիներ են, եթէ նա նիւթ ա կ ա ն բոլոր հարցերի մէջ կիմանայ համերաշխութեան զգացմունք հաստատել իր հայրենիքում բնակվող բոլոր հայրենակիցների մէջ, ինչ կրօնին ու ցեղին և պատկանէին նրանք, բաւական է որ նրանք բոլորն էլ հայաստանցի են, հայը այդ ճանապարհով աւելի շուտ կը վրձնուի տայ հայոց խնդիրը, քան թէ զանազան դիւանապետական ճանապարհներով։

Թող հայը չը մոռանայ որ ինքն հայ է, բայց թող յիշի նոյնպէս որ նախ և առաջ նա հայ առաջին է և որ այն բոլոր ազգերը, որոնք բնակվում են Հայաստանում նոյնպէս հայ առաջին են։ Թող նա հասկանայ այդ գաղափարը իր հայրենիքի բոլոր եղբայրներին գործնական ճանապարհով, նիւթ ա կ ա ն թափանքով։

Թող հայը Հայաստանը աւելի բարձր դասի, քան թէ հայութիւնը, և դրանով փրկված կը լինի և հայութիւնը։ Թող չը մոռանայ որ Հայաստանի ամեն մի բնակիչ հայ առաջին է։

Ինչ,— թիֆլիսեցի դարձեալ կը գրվէր։ Բայց քանի որ «Մշակի» խմբագրի ամբողջ ուժը թ ա ռ ք ի մէջն է,—թեմ ևս թանաքի վրա, ասում է թիֆլիսեցի հայը, ինչքան ուզում է գ օ ա տայ թանաքին, թող թանաք ծախողը նրա թերթին գրվի, ես այսպէս էլ լաւ եմ... Հայութիւն, լուսաւորութիւն, մարտնչի լեզու, ազգ, առաջադիմութիւն,—բոլորը դարձեալ բաներ են...

Ամեն տեղ հայը իսկապէս կորցրել է իր ազգութեան վրա ճանաչութիւնը, կորցրել է ազգութիւնը։ Վրաստանում նա լուսաւորչական կրօնի վրա ցի է, երևանեան նահանգում նա լուսաւորչական կրօնի թ ու ռ ք է, և այլն։

Հայը կորցնելով իր ազգութիւնը միայն հաւատարմի է մնացել իր կրօնին։ Բայց եթէ կարծում էք որ դա այն պատճառով հաւատարմի է մնացել իր կրօնին, որ խոր կրօնական զգացմունք ու աստուածապաշտութիւն ունի (երանի այսպէս լինէր), շատ կը սխալվէք։ Եթէ հայը հաւատարմի է մնացել իր կրօնին,—գարձեալ մի անձնական, եսական հաշիւ կայ այդ զգացմունքի մէջ։ Կարելի է ամբողջ կեանքը խաբել, սուտ խօսել, իր նմաններին ծնել, հարստանալ, —բայց կիրակի օրը, եկեղեցի գնալով, մի քանի անգամ ծնւոր դնելով ու խաչակնքվելով կարելի է չահել Աստուծո սիրտը, որպէս զի մեռնելուց յետոյ գոնիք չընկնէ։

Հայը աստուածապաշտ է դարձեալ այն պատ-

Նւ եթէ հայը կամենում է մինչև անգամ դիւանադիտական ճանապարհով գործել, թող պահանջի թիւրքայից և Եւրոպայից ինքնավարութիւն ոչ թէ հայ երի համար միայն, այլ հայ առաջին բոլոր ազգերի համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ

12-ին փետրվարի

Պետերբուրգում այժմ ժողոված են գրեթէ ուսումնարանական բոլոր չըջանների հոգաբարձուները։ Աղագային լուսաւորութեան նախարարի խորհրդի բոլոր անդամների մասնակցութեամբ և նախարարութեան կառավարչի, ստատուս-սեկրետար Սարգսիւի նախագահութեամբ նոքա այժմ սկսել են քննութեան ենթարկել գիմնադիւնների մանկավարժական խորհուրդների յայտարարութիւնները և հոգաբարձական խորհուրդների ընդլիւմէն այն հարցի մասին թէ՛ ինչ միջոցներով կարելի կը լինի թեթեանցել գիմնադիւնական կուրսը աշակերտների համար։

Գիմնադիւնների մանկավարժական խորհուրդները կարծիքները շատ զանազան են։ Մեծամասնութիւնը գալիս է այն եզրակացութեան թէ՛ հարկաւոր է անշուշտ թեթեանցել աշակերտների անային աշխատանքը և դրա համար առաջարկում են հետեւել միջոցները։—1) աշակերտաց առաջին կարգի է շատ հանգստութիւն, որպէս զի նոքա կարողանան պարագլ տանը արհեստներով և դրանով լրացնեն գիմնադիւններում ստացած կրթութիւնը։ 2) հաւասարակշիւ պահպանել աշակերտաց անային պարագլները։ 3) անդադար օգնել թող աշակերտներին և 4) դասական պարագլները հիմնել կանոնաւոր սկզբունքների վրա։

Մանկավարժական խորհուրդները մի և նոյն ժամանակ յայտնում են իրանց կարծիքը ասելով, թէ՛ այդ բոլոր միջոցները միայն ժամանակաւոր բնույթով լինեն ունեն և թէ նոքա գործադրութիւնը չէ կարող չափիկի կերպով թեթեանցել աշակերտաց դրութիւնը։ Աշակերտաց աշխատանքը իսկապէս թեթեանցելու համար, մեծամասնութեան կարծիքով, կարեւոր կը համարվէր հիմնաւոր քննութեան ենթարկել դպրոցական պրօգրամները և քննութեանց համար սահմանադրած կանոնները։ Գաղափարական պրօգրամները պիտի կրճատուին բովանդակութեամբ բոլոր առարկաներից, իսկ դրանցից մի քանիսը պէտք է ուրիշ տեսակ կարգադրվեն դաս-

ճառով, որ գիտէ թէ Աստուծոյ ոյժ է, գիտէ որ ինքն նրանից կախում ունի... վնչ թէ դրժոխքն ուղարկի... Կա չէ բարկացնել ոյժ ունեցողներին...

Բայց եթէ մի օր հայը պատահմամբ իմանար թէ Աստուծոյ այս կամ այն պատճառով, այսուհետեւ հրաժարվել է մարդկային զօրք ուղարկելու իրաւունքից,—հայը այլ ևս երբեք չէր էլ գնայ եկեղեցի...

Հայը այն պատճառով աստուածապաշտ չէ որ Աստուծոյ գիրքը կարդացել, ուսումնասիրել, հասկացել է,—որ, նա երբեք չէ էլ ուսումնասիրել այդ գրքի բովանդակութիւնը,—բայց այն պատճառով որ շատ յարմար է կեանքի մէջ արած բոլոր կեղծաստութիւնները եկեղեցում քսան կօպէկանոց մօմ դնելով ծածկել...

Եւ նա աշխատում է քսան կօպէկանոց մօմն էլ, եթէ հարկ է, տաս կօպէկով առնել... Բան չը կայ, մտածում է նա, Աստուած ի՞նչ չի իմանայ որ ես միայն տաս կօպէկ եմ վճարել, իսկ մօմի հաստութեան վրա նայելով, դարձեալ հաւատացած կը լինի որ քսան կօպէկանոց է...

Ամեն բան ց ո յ յ ի համար, ամեն բան մ օ ղ ա յ ի համար...

Երբ որ «ГОЛОСЪ» լրագրում հայերին պաշտպան մի յօդուած է երևում,—մեր հայերը մի քանի օր շարունակ սկսում են հայերէն խօսել, մեր հայ ընտանիքների օրիորդները սկսում են հայոց լեզուի դասեր առնել... Այդ տեսակ է

ստանց վրա, որպէս զի պրօգրամներինց դարձ քաղի այն ամենը, ինչ որ չէ նպատակաւ աշակերտաց կանոնաւոր դարգացմանը մըտաւորական կողմին, այլ միայն ընթացում է նոյա միտքը։ Գիմնադիւններից մի քանիսը ցոյց են տալիս թէ՛ աշակերտաց դժուարութիւնները և արգելքները, որոնք աղեկցութիւն ունեն և նոյա տարեկան պարագլմանց վրա, գլխաւորապէս կախումն ունեն հարգանքնութեանց սիւտեմայից և թուանշանների պարտաւորական լի-

Ուսումնարանական չըջանների հոգաբարձուաց ժողովի առաջին նիստում քննվել են այն բոլոր հանրա-դիւզակութեան ու մանկավարժական միջոցները, որոնցով յոյս կայ թեթեանցել աշակերտաց անային պարագլմունքները։

Գիմնադիւնների մանկավարժական խորհուրդները առաջարկում են մի ամբողջ շարք այդ տեսակ միջոցների։ 3) անային բոլոր դասերի նախապատրաստութեան համար ժամ ու կէսից աւելի չը նշանակվի։ 4) ամառուան արձակուրդների համար տուած պարագլմունքները վերցնել և 5) ամառուան արձակուրդների ժամանակը աւելցնել։

Հին լեզուներից ենթադրվում է վերցնել կամ դռնէ մեծ մասով սահմանափակել քերականական կանոնների համար օրինակների, նոյնպէս և լատինական և յունական ոտանաւորների պարտաւորական անգիր սերտողութիւնը, քերականութեան դասագիրքը ամբողջ ուսման տարուայ ընթացքում չը փոխել, վերցնել բոլոր անային դրուար աշխատանքները հին լեզուներից բոլոր դասաւորներում և բաւականապէս միայն դասական կրթութիւններով։

Ուշադրութիւն է դարձրած նոյնպէս և այդ դասագրքերի վրա, որոնք գործադրվում են այժմ դպրոցներում և որոնք աչքի են ընկնում թէ՛ իրանց ընդարձակութեամբ, անթիւ երկրորդական և շուտով գլխաւոր միտքը խանգարող մանրամասնութիւններով ու չեն յարմարեցրած ինչպէս երեխայոց հասակի ու զարգացմանը, նոյնպէս և այն ուսման ժամանակի տեղութեանը, որ նըշանակված է այս և այն կուրսը անցնելու համար։ Ուստի և առաջարկվում է նոր ու լաւ դասագրքեր մշակելու համար հոգալ և այդ նպատակի համար կօնկուրս նշանակել։

Հոգաբարձական ժողովի երկրորդ նիստում ենթարկվել են քննութեան մանկավարժական ժողովների ենթադրած մի քանի փոփոխութիւնները պրօգրամների մէջ, մի և նոյն ժամանակ ուշադրութիւն է դարձվում III ու IV դասաւորանց պրօգրամների վրա, ըստ որում այդ դասաւորանց աշակերտները համաձայն իրանց ֆի-

մի երկու շարքով... Զետոյ ամեն բան դարձեալ մոռացվում է, հայերը սկսում են միմեանց մէջ դարձեալ օտար լեզուով խօսել, հայ օրիորդները արձակում են իրանց վարժապետներին...

Գրում էք մի յօդուած, որի մէջ յայտնում էք թէ թիֆլիսեցի հայ կինը հ ա ռ ե մ ա կ ա ն կին է, թէ նա մտաւոր կեանքից բոլորովին դուրկ է ապրում, որ և կազմում է գլխաւոր յատկանիշը հարեմական կանանց, բացառութեամբ էք թէ դրա մէջ չէ աղատութիւնը, որ կինը դարձեալ դարձեալ խօսի ամեն հարցի վրա, անաւօտից մինչև գիշերը փողոցներում շրջի, մօղային խանութները յաճախի և այլն...

Իսկոյն, այդ թարմ աղաւորութեան տակ, թիֆլիսի մի քանի կանայք հաւաքվում են, մի օր և է ընկերութիւն են հիմնում, որ ցոյց տան թէ միմիայն անանական և հարեմական կեանքով չեն ապրում, այլ և մ տ ա ռ ր կեանքով ուրեմն հարեմական կանայք չեն... Բայց դժբաղդութիւնն այն է, որ այդ նոր հիմնած ընկերութեան գոյութիւնը տեսում է շատ շատ մի երկու օր...

Ամեն բան ց ո յ յ ի համար...

—Ախր, միշտ մեղադրում էք մեզ, ասում էր ինձ նորերում մի հայ վաճառական, հանդիպելով ինձ, արած քանդակեանք, դուրստ որ քանդակեանք...

—Ինչպէս քանդակեանք, և ինչ մեղադրանքի

դիւքական դրութեան պահանջում են մի առանձին խնամք ու հոգատարութիւն։ Իրանց տարիներով նոքա ապրում են տղայական և երիտասարդական հասակի չըջանի մէջ, մի և նոյն ժամանակ նոյա ֆիզիքական ու բարոյական չըջանում նշմարվում է մի յանկարծակի փոփոխութիւն, որը և ցօլանում է մի առ ժամանակ նոյա ընդունակութեանց մէջ։ Ի նկատի առնելով այդ բոլոր պատճառները առաջարկվում է որքան կարելի է քաղցրութեամբ ու մարդասիրութեամբ վարվել IV դասաւորան աշակերտաց հետ, ինչպէս կուրսի ժամանակ, նոյնպէս և հարցաքննութեանց ժամանակ։

Իւրաքանչիւր առարկայի վերաբերմամբ մասնաւորապէս մենք կանգ առնենք հին լեզուներէն թիւրքերած կրճատմանց վրա։ 1) քերականութիւնը անցնելու ժամանակ պիտի բաւականապէս նրանով, ինչ որ կազմում է նրա ամենագլխաւոր մասը—չը ծանրաբեռնել աշակերտաց միտքը զանազան բացառութիւններով և երկրորդական մանրամասնութիւններով։ 2) կարճացնել հին հեղինակների թիւր թարգմանութեանց համար։ 3) կարճացնել այն դրուներին և ոտանաւորների թիւր, որոնք ընթերցանութեան համար պարտաւորեցուցիչ են համարվում։ 4) յունական լեզուի ուսումը պարտաւորական չառնել։ 5) բաց թողնել յունական լեզուի գիմնադիւնական կուրսի առարկաների թիւից և թիւյ տալ այդ երկու լեզուները միայն համալսարանական քաղաքներում, երկու հին լեզուների ուսումը վերջին չորս դասաւորներում պարտաւորական չառնել նոյա համար, որոնք համալսարան մտնելու դիտաւորութիւնն չունեն։ 7) լատինական լեզուի դասաւորութիւնը ակոխ երկրորդ դասաւորից։ 8) յունական լեզուի դասաւորութիւնը սկսել չորրորդ դասաւորից։

Բայց թէ ինչ եզրակացութեան եկան հոգաբարձական ժողովի առաջին երկու նիստերը—դեռ յայտնի չէ պարագլպէս, բայց լսել ենք որ թուանշանների սխտեման քննութեան է ենթարկված, բերանացի քննութիւնները չորրորդ դասաւորան աշակերտների համար բաց են թողնվում և առհասարակ մեծ նշանակութիւն են տալիս գրաւոր քննութեանց։ Կլասիքական լեզուների պրօգրամային փոփոխութիւններին համար նշանակած քննութիւնը, ստատիկ վրձաբանութիւններից յետոյ, թողած է առաջիկայ նիստերին։

Ա. Գալստեանց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ПОРЯДОКЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆԸ

Կ. Պօլսից „ПОРЯДОКЪ“ լրագրին գրում են հետեւեալով փետրվարի 3-ից 9-ը Օրվայ նշաւոր խնդիրը անդիլական ղեկաւան պ. Գօշենի Կ. Պօլսի հասնելն է, որտեղ սպասում

մասին էք խօսում, հարցրի ես հատաքրքրութեամբ։

—Բաս ինչ է, եթէ մեղադրանք չէ, ինչ որ ձեր խմբագիրը միշտ մեր մասին գրում է իր գաղտնի, հայերը ժաշտ են, հայերը աղբին չեն օգնում, ասում է... Ձեր օգնում, բաս ինչ ենք անում։ Այսօր թատրոնն է, վաղը «Միացեալ» ընկերութիւնն է, մէկէլ օր «Բարեգործական» ընկերութիւնն է, այստեղ «տոմկոնց» մասնաժողովն է, այնտեղ ակցիայով գաղտնի հրատարակելն է, այդ բոլոր ձեռնարկութիւններին դարձեալ ուղիքն է գնում փողը, եթէ ոչ մեղանից... արի ու այդ բոլոր ծախսերին դիմացիր...

Ես պարոնին ոչինչ չը պատասխանեցի, իսկ ձեզ ընթերցող, կը պատմում երկու անցքերի մասին,—դուք ինքներդ, ինչպէս ուղեանք համաժողովներ։

Կ. Պօլսի ներքէս պատրիարքը ուղարկում է նամակներ թիֆլիսեցիներին, հրաւիրելով նրանց օգնել Հայաստանի սովեալ եղբայրներին։

Թիֆլիսի առաջնորդարանում հաւաքվում են հարուստ հայերը։

Միմեանց յորդորելով, միմեանց ամաչեցնելով, թուքով, մրով,—վերջապէս ժողովում են 10,000 բուրք, հայ սովեալներին օգնելու համար։

Մի քանի ժամանակից յետոյ ուռուաց օպերայի երգչուհի տիկին Պալլաօսկու Բենեֆիան է լինում... Մի գիշերվայ մէջ նոյն թիֆլիսեցի հայերը տալիս են ուռու երգչուհուն 10,000 բուրքու ընծաներ...

Եւ չը պէտք է մոռանալ որ տիկին Պալլաօսկի

են նոյնպէս և գերմանական դեսպան կոմս
Հաքֆելդին, որ արդէն ճանապարհ է ըն-
կել: Փետրվարի 1-ին անգլիական դեսպանի
Կ. Պոլիս հասնելուց 2 ժամ յետոյ սուլ-
տանի գեներալ-ադիւտանտը գնաց նրան ող-
ջունելու իր տիրոջ կողմից: Նրէկ Գոշեն Բ.
Կրան մէջ էր, որտեղ նա երկար ժամանակ
խօսում էր մեծ վիզեր Սաիդ-փաշայի և
արտաքին գործերի մինիստր Ասիմփաշայի
հետ: Թիւրքաց կառավարութիւնը չա-
փազանց վախենում է Գոշենի զինաւոր-
վելուց, ի նկատի ունենալով իր կատարեալ
անսխալութիւնը: Եկամտաների աղբիւրները
մինչ այն աստիճան սպաւելել են, որ կառա-
վարութիւնը անկարող է ուժիկներ վճարել
կայսերական լիցէի պրոֆէսորներին, որոն-
ցից մէկը Հրաժարվեցաւ դասախօսութիւն-
ներ կարգաւորուց, որովհետեւ վեց ամիս շա-
բունակ իր ուժիկից ոչ մի կոպէկ չէր ստա-
ցել: Բացի այդ լրագիրները հրատարակեցին
այդ անցքը և դրանով կորովեցաւ հաւա-
տարմութիւնը գէպի կառավարութիւնը, որ
երբեմն այս և երբեմն այն բանկիրից կրէ-
զիտ է խնդրում: Թիւրքիան, ինչ որ կա-
րողացաւ, գրաւ դրեց, մինչև անգամ Կ.
Պոլիսը Գալատայի հետ միացնող կամուրջի
եկամուտը: Նա պարտական է Անգլիային,
Ռուսաստանին, Ֆրանսիական և Թիւրք
բանկիրներին: Ամենքը գլուխը կորցրել են,
իսկ սուլթանը անձնականապէս կառավա-
րելով արտաքին քաղաքականութիւնը, աւել-
ի էլ խախտում է Թիւրքիայի գրութիւնը
Եւրոպայի և Ասիայի մէջ: Նորերում լուր
տարածվեցաւ, որ Թիւրքիան իր երեք մի-
լիոն պարտքի փոխարէն մտադիր է զեջա-
նել Ռուսաստանին Հայաստանի մի մասը՝
Վան, Մուշ, Էջմուշի հետ միասին: Կրժ-
ուար է դատել, թէ որքան ձիւղ է այս
լուրը, յայտնի է միայն, որ երեք տարվայ
հարկերը Պոլսի մէջ առաջուց առ-
նելով, Թիւրքիան զգում է իր գործի վտի-
ճանը: Կորցնելով իրանց ընդունակութիւնը
ապագան նախատեսելու մասին, Թիւրքերը
անկադար կրկնում են՝ ասենք, Աստ-
ուած ողորմած է:

Գոշենական տարրի աջողութիւնը Արև-
ելքի մէջ, որտեղ նա ձգտում է կլանել
մնացած բոլոր տարրերը, չափազանց նկա-
տելի է. սխառեմատիկաբար իրանց նպա-
տակին ձգտելով և տարածելով յունա-

կան նոր լեզուն, հելլենները ամենակարճ
ժամանակամիջոցի մէջ այն հետեանք-
ներին հասան, որ նրանց լեզուն այժմ մըր-
ցում է Թիւրքաց լեզուի հետ կայսերու-
թեան նոյն իսկ մայրաքաղաքի մէջ: Ոչ մի
յոյն ձեռն հարցին ուրիշ լեզուով, բացի
յունարէնից, չի պատասխանել, եթէ նա
մինչև անգամ իմանայ Թիւրքաց և հայոց
լեզուները: Այդ գաղափարը մինչ այն աս-
տիճան սովորական է վարձել յոյների հա-
մար, որ մինչև անգամ յոյն ծառաները ստի-
պում են մեծերին և փոքրերին յունարէն
խօսել: Ես առիթ ունեցայ փողոցի մէջ խօ-
սել մի փոքրիկ յոյն աղջկայ հետ, որ վե-
րադառնում էր հայ-կաթոլիկների ուսում-
նարանից, և նա իմ բոլոր հարցերին Թիւր-
քաց լեզուով մի զարմանալի յամուռու-
թեամբ պատասխանում էր յունարէն լեզուով:
Իսկ ինձ յայտնի է, որ հայ-կաթոլիկների
ուսումնարանի մէջ ամենքի համար պար-
տաւորեցուցիչ է իմանալ Թիւրքաց լեզուն:
Կ. Պոլսի հայերը յոյների կատարեալ
հակապատկեր են կազմում թէ տոնուռու-
թեան պակասութեամբ և թէ քաղաքական
համերաշխութեամբ: Կ. Պոլսի հայը բա-
ւական օտարտի բացառութիւն է կող-
մում հայաստանցի և ուսմանական իր ցե-
ղակիցներին: Նա թիկն է, զբոյսն է,
զերբը և շուտով մուտքով: Նրան
պակաս են մտածված գործողութիւնները
և կամքի ոյժը: Արտաքուստ նա Ֆրանսիա-
ցի է, բովանդակութեամբ և հասկացողու-
թեամբ վրացի: Եթէ այստեղ պատահում է
հայկական իսկական տիպ, աչքի ընկնող ըն-
դունակութիւններով, եռանդով և հաստատ
բնաւորութեամբ, այդպիսի անձնաւորու-
թիւնները գաւառացիներ են Հայաստանից
Կ. Պոլսի եկած և ոչ թէ մայրաքաղա-
քի մէջ ծնվածներ: Այստեղ շատ կան այդ-
պիսի գաւառացիներ, որոնք գերազանցում
են մասնաւոր և պետական գործունէու-
թեան մէջ: Կրանց թւիցն է և սահմանա-
գրութեան այն հեղինակը, որի հետ երեք
տարի առաջ կապված էր Միտհաթ-փա-
շայի անունը: Կա Գրիգոր Էփենդի Սեփան
է, թէ Միտհաթի և թէ Աբդուլ-Ազիզի ու
Մուրադ Վ ժամանակակից գործիչների մե-
ջիստօժեղը:

Համեմատելով Կ. Պոլսի հայերի և յոյնե-
րի բնաւորութիւնները, ես կամենում էի ակն-

երեք ցոյց տալ Կ. Պոլսի կուլտուր հեղ-
ինականութեան առաւելութիւնը, որի
հետ մինչև անգամ հայերը անկարող են
գրականապէս մրցել: Կրանով կարող էք դա-
տել, թէ ինչ հետեանքներ կունենայ յոյ-
ների մտնելով Մակեդոնիային և Բուլե-
ղային, երբ Գոշենի հետ կը միանայ
Էպիլոս և Թեսալիա: Հաւատացէք, որ յոյնե-
րի արմատացած ազգային ֆանատիկուսու-
թեանը և յամառութեանը դժուար թէ դի-
մանայ նոյն իսկ բազմաթիւ և սերբական
գաղափարները: Գոյները սլավոններին
մի սպունդ կը դարձնեն, որ հեշտութեամբ
կը ծածէ հելլենական լեզուն և սովորու-
թիւնները: Ինչ և իցէ պատմութեանը և
անցքերի ոյժին կարելի է ընդգիծաբերել,
բայց անկարելի է նրանց յաղթել, եթէ
վերջին խօսքը միշտ կուլտուրային է պատ-
կանում, ուրեմն անվիճելի է, որ յունական
կուլտուրան միշտ եղել է և կը լինի պա-
վանների և հայերի կուլտուրայից աւելի
բարձր:

Ահա Թիւրքաց կառավարութեան մի քա-
նի նոր կարգադրութիւնները: Ներքին գոր-
ծերի միոնստրութիւնը կարգադրել է Ժո-
զովրդագրութիւն անել Կ. Պոլսի մէջ մի
նորութեամբ, որ երբեք չէ պատահել Թիւր-
քաց տիրապետութեան պատմութեան մէջ:
Հրամայված է քաղաքի բնակիչ տղամարդ-
կանց հետ հաշուել և կանանց, որոնց
մինչև այժմ Թիւրքերը անհատ մարդիկ
չէին համարում: Ինչպէս տեսնում էք Թիւր-
քերի մէջ էլ մտնում է առաջագիծութեան
ոգին, իսկ նրանց բամբասում էին յոյները,
հայերը և սլավոնները, Թիւրքերի—կուլ-
տուրական այդ թշնամիները: Բայց բանը
նրանումն է, որ վերոյիշեալ քայլը արված
է ոչ թէ մարդաբան նպատակներով, այլ գե-
ղեցիկ սեռի վրա էլ հարկ դնելու համար:

Այսօր և երէկ ուղարկվեցան Վոլս և
Էպիլոս բաւական շատ պատերազմական
պաշարներ և զինուորներ զինաւորապէս
զգլորդական արտիլերիայից: Թիւրքիայի
ծառայի զինը այժմ վիճակվել է աւստրիա-
կան շոգենանների ընկերութեանը, որ քսան
անգամից աւելի այցելել է յունական ջրե-
րը և որ յոյս ունի վարձատրութիւն ստա-
նալ Թիւրքիայի յաղթութեանց յետոյ, երբ
Գոշենաստանը նրան մի քանի միլիոն պատե-
րագումական ծախսեր կը տայ:

«Վակիթ» լրագրի պատրիարքութեան հա-
մեմատ Մակեդոնիայից Կ. Պոլսի են բերված
13 բազմաթիւներ, որոնք մեղադրվում են
պետական դաւաճանութեան մէջ, այ-
սինքն ապստամբութիւն պատրաստելու
մէջ: Թիւրքաց մեղադրանքների բնաւորու-
թիւնը հասկանալու համար պէտք է այցե-
լի Թիւրքաց դատարանը Թիւրքերի և քրիս-
տոնականների վեճերը քննելու ժամանակ,
երբ քրիստոնեաները մեղաւոր են հանդի-
սանում վրաներ և իրաւաբանական իրա-
ւունքներ չունենալու պատճառով: Իսկ Կի-
արբեքի վիլայեթի մէջ կատարված աւա-
զակութիւնների 52 քիւրդ առաջնորդները,
որոնք բերված էին Կ. Պոլսի, վերադարձ-
ված են իրանց հայրենիքը մեղադրական
ապացոյցների պակասութեան պատճառով:

Գոշենի Կ. Պոլսի գալու օրը մի տեսակ
նախագուշակութիւն պատահեց. իտալա-
կան դեսպան կոմս Կորտի, Զարաթանի պա-
լատի մօտ, որտեղ կալանաւորված է սուլ-
թան Մուրադ, ձիով զբոսնելու ժամանակ,
վայր ընկաւ ձիուց և իր ոտը կորցրեց: Այդ
հանգամանքը պալատական աստղաբաշխնե-
րին առատ նիւթ տուեց նախագուշակու-
թիւնների համար:

Կարձեալ մի ծիծաղելի դէպք: Նրկու օր
է, որ տեղական մամուլի մէջ յարձակողա-
կան յօդուածներ են տպվում Ռուսաստանի
քաղաքական և կրօնական անհամբերողու-
թեան դէմ: Այդ յօդուածներին տեղիք
տուեց կիսապաշտոնական «Մասիս» լրագրի
լուրը, իբր թէ Թիֆլիսի զինուորական գիւմ-
նազիայի և արհեստական դպրոցի վարչու-
թիւնները չեն արգելում իրանց ոչ-հայ
ուսանողներին գործածել ար մե ա շ կ ա բա-
ռը իրանց հայ ընկերներին հայհոյելու ժա-
մանակ: Այդ յիմար լուրը, որ այստեղի աւ-
բողջ մամուլը արտաուպեց, անբաւականու-
թիւն պատճառեց մինչև անգամ ուսուս-
սչներին, որոնք Աստուած գիտէ զրանց
ինչն են եղրակացում: Այսպէս են մար-
դիկ արամադրված այստեղ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳՈՅԻՆ ԲԵԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 23 փետրվար: Պետեր-
բուրգի նահանգական ժողովի վերջին նիս-
տի ժամանակ ընդունվեցաւ Շակեկից կաղ-
մված վարչական աքսորանքները ոչնչացնե-

մի երեկոյ երգչուհի էլ չէ, մի Պատտի, կամ մինչև
անգամ մի Արտո չէ, այլ մի երգչուհի է, որ
ոչնի մի թէն զօրեղ, բայց արդէն կորած
ձայն, մի երգչուհի որ իր կեանքի մէջ բացի
Խարկովի և Կիևի թատրոններից, ուրիշ ոչ մի տեղ
չէ երգել և երկի երեք չի էլ յանդիման Մոսկ-
վայում կամ Ս. Պետերբուրգում երգելու:

Թող ընթերցողը ինքն դատէ... Տաւ հա-
ղար բուրբ ամբողջ Թիւրքաց Հայաստանի տ-
վեալներին համար և տաւ հաղար բուրբ մի
Պապիօսկու համար...

Ո՛վ է ասում թէ Թիֆլիսեցի հայը ժլատ է,
ոչ, նա ժլատ չէ, նա առատաձեռն է, նա ժլատ
է միայն իր ազգային գործերի վերաբերու-
թեամբ:

Որովհետեւ ես ոչ մի ֆիլիստին չեմ կարող
զրել, առանց իմ գրուածքի մէջ Էթիոպիան յիշե-
լու, կը վերջանում այդ ֆիլիստին էլ մեր ե-
րեկոյ հաղթար մասին մի քանի խօսք ասելով:
Թիֆլիսը այս քաղաք պատրաստվում է այս
տարվայ աշնանը լինելու հնազանդական ժողո-
ւին: Թիֆլիսի հրապարակական գրադարանի
գահինում անդադար լինում են հնազանդական
ժողովի համար պատրաստական ժողովներ:

Այդ տեսակ մի ժողով եղել է այս օրերս Է-
թիոպիայի բաւական հեռավորքի զեկուցում ա-
րաւ հայերի մէջ թաղման սովորութիւնների և
ձէսերի մասին, թէ հեթանոսութեան և թէ
քրիստոնեութեան ժամանակ:

Իր զեկուցման վերջը մեր հնազանդ հարկաւոր
համարեց պատմել մի հայոց ժողովրդական լե-
գենդա:

Նրբ Աստուած ստեղծեց աշխարհը, նա որո-
շեց որ բոլոր կենդանիները և մարդը պէտք է
ապրեն իւրաքանչիւրը 30 տարի: Անցնում է մի
երկու տարի, ներկայանում է Աստուծոյն էջը և
ասում է.

—Տեղ, ապաքէս ապրել ես չեմ կարող: Մարդը
ինձ տանջում է, ինձ ահալին բռնեցողով բռն-
նաւորում է, վատ է կերակրում ինձ, և բացի
սրանից իմ ծանր աշխատանքը վարձատրում է
անդադար ծեծելով ինձ: Ես 30 տարի այդ տան-
ջանքի մէջ ապրել չեմ կարող, աղաչում եմ,
քեզ, պակասեցրու ինձ իմ տարիքը:

—Շատ լաւ, ասում է Աստուած, ես քեզանից
կը պակասեցնեմ 12 տարի, դու կապրես միայն
18 տարի:

Էջը շնորհակալութիւն է յայտնում և գնում է:
Անցնում է մի քանի ժամանակ, գալիս է
չունը:

—Տեղ իմ ասում է չունը, այդ ինչ կեանք
է որ ես եմ քաջում. դա շատ կեանք է, ուրիշ
ոչինչ: Այդպէս 30 տարի ապրել ես չեմ կարող:
անդադար հաչել, մարդու բնականաբան պահ-
պան լինել, տկուր ունեւորներ կրծել, և իմ ցոյց
տուած անտանջան հաւատարմութեան համար
դէպի մարդը, նրանից անդադար ծեծ ուտել:
Ոչ, այսպէս ապրել ես չեմ կարող: Խնդրում եմ

քեզ պակասեցրու ինձ մի քանի տարիներ իմ
կեանքից:

—Շատ լաւ, ասում է Արարիչը, ես քեզանից
յետ կտնւեմ 15 տարի, դու կապրես ուրեմն 15
տարի:

Շունը շնորհակալութիւն յայտնելով Աստու-
ծուն, հեռանում է:

Նրանից յետոյ գալիս է կապիլը:

—Աստուած իմ, ասում է նա, իմ կեանքը
անտանջելի է. միշտ կապիլութիւն անել, ամեն-
քին ծաղրել և ուրիշներին համար ծաղրածութեան
առարկայ լինել, մարդու ձեռքում խաղալիք լի-
նել.— դա ինչ կեանք է: Ինձ համար երեսուն
տարի շատ է: Կիցայիւր և պակասեցրու կեանքս:

—Շատ բարի, ես քեզանից յետ եմ ասում
13 տարի, ասում է Աստուած, դու կապրես
ուրեմն միայն 17 տարի:

Կապիլը մեծ շնորհակալութիւն յայտնելով
հեռանում է:

Այդ րօպէին ներկայանում է Աստուծուն
մարդը:

—Ողորմած Աստուած, ասում է մարդը, ինձ
համար 30 տարի քիչ է: Մինչև երեսուն տար-
վայ հասակս ես հաղիւ վերջացնում եմ վայելել
երկրաստորակալան օրերիս ուրախ և անհոգ
կեանքը, յետոյ պէտք է սկսեմ հարստութիւն
դիզել, յետոյ պատկուհում եմ, յետոյ պէտք է
գաւալներս դատարարակամ,— մի խօսքով 30
տարի ինձ համար քիչ է:

—Շատ լաւ, ասում է Աստուած, դու կունե-

նա քեզ սկզբից յատկացած 30 տարին,
բացի տարանից ես քո կեանքին աւելացնում եմ
12 տարին որ ես յետ եմ աւել էլից, 15 տարին
որ հանել եմ շատ կեանքից և կապիլի կեանքից
հանած 13 տարին, ուրեմն դու կապրես ընդա-
մենը 70 տարի:

Նրբ Էթիոպի վերջացրեց իր այդ աւանդու-
թեան պատմութիւնը, ժողովի մէջ տրեց ընդ-
հանուր, խորհրդաւոր լուծութիւն: Այդ ժամանակ
ժողովին ներկայ գտնված հառակաւոր հանդիսա-
կաններից մինը զեկուցելով իր մի նորից հասա-
կաւոր ծանօթին, բարձր ձայնով հարցրեց նրան.

—Իսկ մենք, բարեկամ, ինչ հասակի մէջն ենք
գտնվում այժմ.— մարդու, էջի, չան, թէ կա-
պիլի հասակի մէջ:

Ընդհանուր ծիծաղ յաջորդեց այդ հարցմուն-
քին, բայց հարցին ոչ մի տեղից պատասխան
չեղաւ:

Մեր ուսումնական, հնազանդ զեկուցանողը
բաւական կերպով շփոթվեց:

Բայց նա էլ չը բաւականացրեց ներկայ գը-
տնվածներին հեռաքրքրութիւնը և չը յայտնեց
թէ ինքն ինչ հասակի մէջն է գտնվում:

Ահա այսպէս ենք պատրաստվում մենք այս
տարի մեր քաղաքում լինելու հնազանդական
ժողովին:

